



**ԴԻՍՈՐԴԻ
ՈՒՆԵՑՈՒՅՑ
2023-2024**



“

Սիրելի՛ դիմորդ,

Դիմելով Հայաստանում ֆրանսիական համալսարան (ՀՖՀՀ)՝ Դուք ընտրում եք գերազանց կրթություն: ՀՖՀՀ-ում եք կառուցելու Ձեր մասնագիտական ծրագիրը պատրաստակամ հետազոտող-դասախոսների և գործարար ոլորտի փորձառու ներկայացուցիչների աջակցությամբ: Նրանք Ձեզ կփոխանցեն Նորարարական վերջին հետազոտությունների վրա հիմնված տեսական և գործնական գիտելիքներ: ՀՖՀՀ-ում կսովորեք ինքնուրույնության, բարեվարքության և պատասխանատվության մշակույթը:

Ֆրանսիայի և Հայաստանի կողմից ճանաչված երկու դիպլոմների շնորհիվ կունենաք Հայաստանում և այլ երկրներում աշխատանքի շուկա մուտք գործելու ամուր հիմք: Դուք կլինեք ֆրանկոֆոն, բազմալեզու, կլինեք Ձեր ոլորտի լավ մասնագետ, կկարողանաք պատասխանատու պաշտոն զբաղեցնել ձեռնարկությունների և վարչական կառույցների բարձր օղակներում, ստեղծել Ձեր ձեռնարկությունը կամ ընտրել գիտահետազոտության ուղին:

Մենք Ձեր կողքին կլինենք և կուղեկցենք Ձեզ ուսումնառության ողջ ընթացքում: Բարի գալուստ Հայաստանում ֆրանսիական համալսարան:

”

Սալվա Նակուզի
ՅՖՀՀ ռեկտոր



ՏԵՍԼԱԿԱՆ

ԴԱՌՆԱԼ ԿՈՎԿԱՍՈՒՄ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԱՏԱՐՆԵՐԻՑ ՄԵԿԸ ԵՎ
ՕՐԻՆԱԿԵԼԻ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՐԱՍՏԵԼ ԱՐԴԱՐԱՄԻՏ,
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԵՎ ԼԱՅՆ
ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔ ՈՒՆԵՑՈՂ
ԵՐԻՏԱՍԱՐԴ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ

ՂՈՒՂ ԴԵՊԻ ՄԵԾ ԱՇԽԱՐՀ

Երկու դիպլոմ՝ ֆրանսիական/եվրոպական և հայկական գործընկեր համալսարաններ Ֆրանսիայում, ֆրանսիացի 80 դասախոս յուրաքանչյուր ուստարում, ֆրանսիացի ռեկտոր, պրակտիկա արտերկրում:

ՊՐՈՑԵՍԻՈՆԱԼԻԶԱՑԻԱ

աշխատանքի տեղավորման բարձր ցուցանիշ, պարտադիր մասնագիտական պրակտիկա, ձեռնարկատիրական հմտությունների զարգացմանը նպաստելը Աքսելերատոր 28-ի միջոցով:

ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ

կրթաթոշակներ և սոցիալական օգնություն, անկողմնակալ գնահատում, աջակցության ծրագրեր, ինչպիսին է « Զինվորական ծառայությունից վերադարձած ուսանողներին դեպի հաջողություն ուղեկցելու» նախագիծը (« PREMS »):

ՀՅՀՀ-Ն՝ ԹՎԵՐՈՎ

5 **ՑԱԿՈՒՆԵՏ՝**
Մարքեթինգ
Իրավագիտություն
Ֆինանսներ
Կառավարում
Ինֆորմատիկա և կիրառական
մաթեմատիկա

2 **ՊԵՏԱԿԱՆ ԴԻՊԼՈՄ՝**
հայկական և ֆրանսիական
/եվրոպական/, որը ճանաչվում է
ամբողջ աշխարհում

4% 2021 թվականի
շրջանավարտների
ընդամենը 4%-ն է
**ԱՇԽԱՏԱՆՔ
ՓՆՏՐՈՄ**



2700+
ՇՐՋԱՆԱՎԱՐՏ



Հաջողություն մասնագիտական կարիերայում

- Շրջանավարտների՝ աշխատանքի տեղավորման բարձր ցուցանիշ (2021 թ.-ի շրջանավարտների 90%-ից ավելին աշխատում է)
- Մասնագիտական պրակտիկա արտերկրում, ինչը միջազգային փորձ ձեռք բերելու հնարավորություն է տալիս:



Բարձր որակի միջազգային կրթություն

- Ժան Մուլեն Լիոն 3 և Թուլուզ 3 Պոլ Սաբատիե համալսարանների հետ համագործակցություն
- Երկու դիպլոմ՝ հայկական և եվրոպական, որը ճանաչվում է ողջ աշխարհում



Աշխարհայացքի ընդլայնում

- Ֆրանսախոս միջավայր
- Շարունակական շփում օտարերկրացի դասախոսների հետ՝ սկսած բակալավրիատի 3-րդ կուրսից



Կրթական անաչառ և պատասխանատու միջավայր

- Ակադեմիական կրթաթոշակներ և սոցիալական օգնություն
- Անկողմնակալ քննություններ

ԸՆՏՐԵԼ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ



ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՉՖՅՅ-ՈՒՄ

ԲԱԿԱՆԱՎՐԻԱՏ

Շուկայագիտություն (մարքեթինգ)
Կառավարում
Իրավագիտություն
Ֆինանսներ
Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)

ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ

Շուկայագիտություն (մարքեթինգ)
Ֆինանսներ (ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ)
Իրավագիտություն
Տեղեկատվական համակարգեր (արհեստական բանականությամբ համակարգեր)

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ/ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴՈԿՏՈՐԱՆՏՈՒՐԱ

Տնտեսագիտություն
Հանրային և մասնավոր իրավունք

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ակադեմիական գործընկեր՝
Ժան Մուլեն Լիոն 3
համալսարան
Ուսման տևողություն՝ 4 տարի



Իրավաբանները կարևոր դեր ունեն հասարակական կյանքի բոլոր ոլորտներում՝ տնտեսական, սոցիալական, մշակութային, կրթական, քաղաքական: Իրավագիտություն ուսումնասիրելը նշանակում է ուսումնասիրել հասարակական հարաբերությունները, ընկալել հասարակության հիմնարար խնդիրները և զարգացնել քաղաքացիական գիտակցություն: Իրավագիտություն սովորելը նշանակում է հասարակության մեջ ունենալ ակտիվ և կենտրոնական դեր խաղալու ցանկություն:

Կրթությունը ՀՀ-ի իրավագիտության ֆակուլտետում ուսանողին հնարավորություն կտա ստանալու ինչպես հայկական, այնպես էլ ֆրանսիական իրավունքի հիմնարար գիտելիքներ և հետագայում ընտրելու իր գործունեության իրավագիտական ոլորտը՝ կառուցելով ավելի նեղ մասնագիտական ուղի:

Իրավագիտության բակալավրի աստիճանի կրթական ծրագիրն ընդհանրական է. նպատակը՝ իրավական գիտելիքների ամուր հիմք և իրավական մշակույթ ձեռք բերելը: Այսպիսով, ՀՀ-ի իրավագիտության ֆակուլտետում ուսանելու չորս տարիների ընթացքում ուսանողները բացահայտում են և հանրային, և մասնավոր, և միջազգային

իրավունքի ոլորտները: Առանձնահատուկ է այն, որ բացի հայկական իրավունքից՝ ուսումնասիրվում է նաև ֆրանսիական իրավունքը՝ ուսանողներին հնարավորություն տալով տարբեր կողմերից դիտարկելու մասնագիտության առանձնահատկությունները:

ՀՀ-ի կրթական ծրագրի կարևոր առանձնահատկություններից է ոլորտի հայ և ֆրանսիացի առաջատար մասնագետ դասախոսների ներգրավվածությունը, որոնք դասավանդման ընթացքում համադրում են տեսությունը և իրենց աշխատանքային փորձից վերցված իրավիճակային իրական խնդիրները:



Կարին Յոյսեփեան
դեկան

“ Իրավունքի ուսումնասիրումը նախ նշանակում է ուսումնասիրել հասարակությունն ու հասարակական կյանքը՝ կարգավորող կանոնների ամբողջությունը՝ վերլուծելով դրանց մեխանիզմները թե՛ ազգային, թե՛ միջազգային տեսանկյուններից: ՀՀ-ում իրավաբանության մասնագիտությունը ուսանողներին հղկում է մեթոդապես, զարգացնում նրանց վերլուծական մտածողությունը, հնարավորություն տալիս ձևավորելու իրաշալի պրոֆիլ տարբեր դեկավար պաշտոնների համար և նրանց առջև բազմաթիվ հորիզոններ է բացում: ”

“ ՀՀ-ում իրավաբանության բակալավրիատում սովորելը հավասարազոր է դեպի ապագա նայելուն: Ինչու՞: Այն ապագա մասնագիտացման համար անհրաժեշտ հիմնարար հմտություններ ձեռք բերելու լայն հնարավորություն է տալիս: Դա իրականանում է որոշակի տեխնիկայի տիրապետման (բառապաշարի տիրապետում, մեթոդների կիրառում, դատողությունների համակարգում) և կայուն իրավական մշակույթի ձեռքբերման շնորհիվ, որոնք վերաբերում են իրավունքի բոլոր բնագավառներին: ”



Քրիստել Գագո
Համադեկան

Սովորելով այս ֆակուլտետում՝ ուսանողը ձեռք կբերի գիտելիքներ ինչպես Հայաստանի իրավունքի, հայկական դատաիրավական համակարգի, միջազգային և եվրոպական իրավունքի, այնպես էլ Ֆրանսիայի դատաիրավական համակարգի և իրավունքի հիմնական բնագավառների մասին:

Ուսանողների մեջ կզարգանան իրավիճակներն իրավաբանորեն վերլուծելու, որակավորելու, համապատասխան իրավական կանոններ կիրառելու մասնագիտական, ինչպես նաև իրավական գրավոր ու բանավոր խոսքի և հետազոտական աշխատանքներ կատարելու հմտություններ:

Բակլավրիատի վերջին կուրսի կրթական ծրագրում ներառված է 7 շաբաթ տևողությամբ պրակտիկա, որի ընթացքում բոլոր ուսանողներին ՀՀ առաջատար ընկերություններում գործնական փորձ ձեռք բերելու, իսկ լավագույն ուսանողներին ամեն տարի պրակտիկան արտերկրում անցնելու հնարավորություն է ընձեռնվում:

ՀՀՀՀ-ում ձեր առօրյան հագեցած կլինի. նույն օրը դուք կարող եք լսել մասնագիտական առարկայի դասախոսություն (օրինակ՝ քաղաքացիական իրավունք), որին կհաջորդեն գործնական պարապմունքները: Դրանք անցկացվում են ավելի փոքր խմբերով՝ թույլ տալով դասախոսի հետ մտքեր փոխանակել և քննարկումների մասնակցել, ինչպես նաև կատարել գործնական վարժություններ՝ կիրառելով դասերի ընթացքում ձեռք բերված տեսական գիտելիքները: Նույն օրվա ընթացքում դուք կկարողանաք նաև մասնակցել ֆրանսերենի և անգլերենի դասերի:

Աշխատանքային հեռանկարներ պետական և մասնավոր ոլորտներում

-Իրավաբանական և դատաիրավական մասնագիտություններ՝ փաստաբան, նոտար, դատավոր, դատախազ, քննիչ (համապատասխան մրցույթներ անցնելուց հետո),
-Իրավախորհրդատվություն իրավաբանական կազմակերպություններում, ձեռնարկատիրական ընկերություններում, բանկերում, ապահովագրական ընկերություններում, հասարակական կազմակերպություններում,
-Իրավաբան վարչական կառույցներում, միջազգային կազմակերպություններում, դատարանում, ազգային անվտանգության և պաշտպանության ծառայություններում,
-Իրավաբանական հետազոտություններ, դասավանդում,
-Դիվանագիտական ծառայություն և այլն:

Կրթությունը շարունակելու հնարավորություններ

·փաստաբանական դպրոցում,
·մասնավոր կամ հանրային իրավունքի մագիստրատուրայում,
·քաղաքացիության, միջազգային հարաբերությունների, կառավարման և հումանիտար գիտությունների այլ ոլորտների մագիստրատուրայում:



ՀՖՀՀ-ի ուժն իր միասնականության մեջ է. ուսանողները, շրջանավարտները, դասախոսները և անձնակազմը համախմբվում են ընդհանուր արժեքների և ընդհանուր առաքելության շուրջ, այն է՝ ծառայել Հայաստանի զարգացման գործին՝ օգնելով հայ երիտասարդներին:

Իրավագիտության ֆակուլտետի
4-րդ կուրսի ուսանող
Արման Դրոշակիրյան

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ

**Ակադեմիական գործընկեր՝
Թուլուզ 3 Պոլ Սաբատիե
համալսարան
Ուսման տևողություն՝ 4 տարի**

Նորագույն տեխնոլոգիաների մշակումը և կիրառումը բեկում են մտքով պետությունների զարգացման մեջ՝ ապահովելով թռիչքային աճ (օրինակ՝ արհեստական բանականությամբ համակարգերը, քվանտային տեխնոլոգիաները, արհեստական արբանյակները, խելախոսները և այլ հայտնագործությունները), դրանք որոշիչ դեր ունեն պետությունների մրցունակության, անվտանգության և կենսամակարդակի բարձրացման գործում: Համակարգչային գիտությունը շատ լայն ոլորտ է, որը ծագել է մասնագիտական մի քանի հիմնարար և կիրառական ոլորտների հանգույցում: ԻԿՄ ֆակուլտետի հիմնական առաքելությունն է ուղեկցել ու առաջնորդել ֆակուլտետի մտքի ու երևակայության անսահմանափակ թռիչք ունեցող ուսանողներին՝ միջազգային ասպարեզում դառնալու մրցունակ ժամանակակից ամենապահանջված մասնագիտական ոլորտում և կառուցելու սեփական մասնագիտական ուղին Հայաստանում:

Ինֆորմատիկայի (համակարգչային գիտություն) բակալավրի կրթական ծրագիրը մշակվել է Թուլուզ 3 Պոլ Սաբատիե համալսարանի հետ համատեղ: Ինֆորմատիկայի բակալավրի կրթական ծրագրի գիտելիքներն ու հմտությունները մշակվել են ABET-ի և Հաշվողական մեքենաների ասոցիացիայի (ACM) համակարգչային գիտությունների



ուսումնական պահանջներին համահունչ:

Համակարգչային գիտության դասավանդման մեջ գերակշռում է տեսական գիտելիքների կիրառումը, ուստի կարևոր դեր է հատկացվում մասնագիտական նախագծային աշխատանքներին (կրթական ծրագրի մոտ մեկ երրորդը), որոնք զուգորդվում են արդյունաբերության հետ համագործակցությամբ: Մասնագիտական ինտեգրումը ՀՀ-ի ուսումնական ծրագրի բաղկացուցիչ մասն է:

Ուսումնառության առաջին տարվանից ուսանողները մշակում և մասնակցում են արդյունաբերությանն առնչվող իրական մասնագիտական նախագծերին, որոնք ընթացքում նրանց ղեկավարում են նաև միջազգային վարկանիշով ակադեմիական մենթորները: Բակալավրիատի ընթացքում ուսանողները իրականացնում են արդյունաբերությանն առնչվող մասնագիտական յոթ նախագծեր: Նախագիծը ենթադրում է ուսանողի կողմից համալսարանում ձեռք բերված գիտելիքների ինքնուրույն գործնական կիրառում տեսանելի մասնագիտական արդյունքներ ստանալու նպատակով իրական արտադրական խնդիրներ լուծելիս:



**Քրիստինա Սարգսյան
ղեկան**

“ Համակարգչային գիտությունը շատ լայն ոլորտ է, որի հիմքերը գտնվում են մասնագիտական մի քանի հիմնարար և կիրառական ոլորտների հանգույցում: Մեր ֆակուլտետի գլխավոր առաքելությունն է ուղղորդել և ուղեկցել մտքի և երևակայության անսահմանափակ թռիչք ունեցող ուսանողներին, օգնել նրանց դառնալու միջազգայնորեն մրցունակ ներկայիս ամենապահանջված մասնագիտական ոլորտում և կառուցելու սեփական մասնագիտական ուղին իրենց հայրենիքում Հայաստանում: ”

“ Ուրախ եմ, որ հետաքրքրված եք ՀՀ-ի ինֆորմատիկայի ֆակուլտետով: ՀՀ-ի ինֆորմատիկայի ֆակուլտետը մեծ տեղ է հատկացնում նախագծերի կառավարմանը, կրթում է ապագա ինժեներների և ինֆորմատիկայի ոլորտի մասնագետներին: Ընտրելով ՀՀ-ն՝ դուք կընդունվեք նաև Թուլուզ 3 Պոլ Սաբատիե համալսարան և կստանաք մի կրթություն, որ միավորում է ինֆորմատիկայի ոլորտում հայկական և ֆրանսիական լավագույն փորձառությունը: ”



**Ալեն Կրուգիլ
Համադեկան**

Այն թույլ է տալիս ստուգել մ ա ս ն ա գ ի տ ա կ ա ն կարողությունները և հմտությունները ուսումնառության ողջ ընթացքում: Կրթական ծրագիրը ներառում է մի շարք առարկաներ, որոնց դասավանդումը իրականացվում է դասախոսությունների, գործնական պարապմունքների և լաբորատոր աշխատանքների ձևաչափով, ինչը համապատասխանում է Թուլուզ 3 համալսարանի և ՀՖՀՀ-ի կողմից հաստատված ուսումնական պլաններին:

Բակալավրի կրթական ծրագրի դասընթացների մի մասը (օպերացիոն համակարգերի, համակարգչային ճարտարապետության, ֆունկցիոնալ և զուգահեռ ծրագրավորման, տեսապատկերների և ծայնային ազդանշանների մշակման առարկաները և այլն) վարում են Թուլուզ 3 համալսարանի միջազգային հեղինակություն վայելող գիտնական դասախոսները, որոնք ներգրավված են Թուլուզի ինֆորմատիկայի հետազոտական ինստիտուտի (IRIT) գիտահետազոտական աշխատանքներում: Այս ինստիտուտը Եվրոպայում ինֆորմատիկայի 3 ամենամեծ գիտական լաբորատորիաներից մեկն է:

Բակալավրիատի առաջին երկու տարիներին ուսանողները ձեռք են բերում հենքային գիտելիքներ տեսական և կիրառական մաթեմատիկայից և ինֆորմատիկայից: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում նաև օտար լեզուների

ֆրանսերենի, անգլերենի և ռուսերենի դասավանդմանը: Երկրորդ կուրսից մասնագիտական առարկաների դասավանդումը իրականացվում է անգլերենով, իսկ երրորդից՝ ֆրանսերենով և անգլերենով:

Դասընթացներն անցկացվում են ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի մասնաշենքում տեղակայված ԻԿՄ ֆակուլտետի լաբորաներում և համակարգչային լաբերում, իսկ արդյունաբերական մասնագիտական նախագծերն իրականացվում են ՀՖՀՀ-ի արդյունաբերական և ակադեմիական գործընկերների հետ համատեղ: Միջին շաբաթական լաբորանային ծանրաբեռնվածությունը 24-30 ժամ է, սակայն մասնագիտության մեջ կայանալու համար ուսանողներին անհրաժեշտ է նաև 2-3 ժամ հավելյալ ժամանակ տրամադրել անհատական և թիմային առաջադրանքների կատարման նպատակով:

Աշխատանքային հեռանկարներ

- Ծրագրակազմի/ծրագրային ապահովման մշակման մասնագետ,
- Ծրագրավորողների կամ ծրագրային արտադրանքի (պրոդուկտի) թիմի ղեկավար բարձր տեխնոլոգիաների ոլորտում,
- համակարգչային ցանցերի ադմինիստրատոր,
- տվյալների հենքերի ադմինիստրատոր:



Կրթության շարունակության հնարավորություններ

Ծրագրի շրջանավարտները կարող են իրենց ուսումը շարունակել ՀՖՀՀ-ի, Ֆրանսիայի Թուլուզ 3 և այլ համալսարանների ինֆորմատիկա (համակարգչային գիտություն) մասնագիտության տարբեր մասնագիտացումներով:

Գործունեության հիմնական ոլորտներ

- համակարգչային գիտություն,
- ներդրված համակարգեր,
- խելացի քաղաք,
- արդյունաբերություն 4.0,
- թվային կառավարման համակարգեր ըստ ոլորտների,
- թվային համակարգերի շահագործման հուսալիություն և անվտանգություն:

ՀՖՀՀ-ում ինֆորմատիկա ուսանելը նշանակում է Թուլուզ 3 Պոլ Սաբատիե համալսարանի հետ համագործակցության շնորհիվ օգտվել այդ ոլորտի ֆրանսիական և եվրոպական հսկայական փորձից: Օտարերկրյա դասախոսների և բարձրակարգ մասնագետների աջակցությամբ մենք ստանում ենք մասնագիտական և անձնական հմտությունների հսկայական պաշար:

Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի 4 -րդ կուրսի ուսանողուհի Արմինե Գևորգյան

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

**Ակադեմիական գործընկեր՝
Ժան Մուլեն Լիոն 3
համալսարան
Ուսման տևողություն՝ 4 տարի**



Տնտեսության ցանկացած ոլորտ ունի տարբեր կառավարիչների կարիք: Վերջինս կախված չէ տնտեսության կառուցվածքային փոփոխություններից, և, հետևաբար, կառավարման մասնագետը, աշխատաշուկայում կառուցվածքային փոփոխություններից անկախ, իր ողջ կյանքի ընթացքում ձեռք է բերում ցանկացած ոլորտում (ավանդական և տեխնոլոգիական) մրցունակ լինելու և աշխատանք գտնելու լայն հնարավորություններ:

Կառավարման կրթական ծրագրում մասնագիտացումը հետագայում առավել նեղ մասնագիտացում ընտրելու բազմակողմանի հնարավորություններ է ընձեռում: Սովորելով կառավարման ֆակուլտետում՝ ուսանողը ծանոթանում է տարբեր ոլորտների (գործարարություն, մարքեթինգ, թվայնացում, նախագծերի կառավարում, ֆինանսներ, հաշվապահություն և այլն) առանձնահատկություններին, որի շնորհիվ հետագա կրթական և գործնական ուղիների ընտրությունը (մագիստրոսական մասնագիտացում, աշխատանքային ոլորտ, սեփական բիզնես և այլն) դառնում է առավել տեսանելի և հիմնավորված:

Կառավարման կրթական ծրագիրն օգնում է արդյունավետորեն և գրագետ լուծելու ոչ միայն մասնագիտական ոլորտի խնդիրները, այլ նաև սեփական

կյանքում կազմակերպական տարաբնույթ հարցերը: Մասնագիտությունը սերտ կապ ունի գործնական ու անձնական տիրույթներում միջանձնային հարաբերությունների կառուցման հետ և նպաստում է մասնագետների արդյունավետ հարաբերությունների կառուցմանը:

Ֆրանսերենից բացի՝ համալսարանում ուսուցանվում են նաև տարբեր լեզուներ (անգլերեն, ռուսերեն, իսպաներեն, գերմաներեն և այլն), ինչը մրցակցային առավելություն է հաղորդում ՀՀՅՀ շրջանավարտներին:



**Հրանտ Հարությունյան
դեկան**

“

ՀՀՅՀ-ն հայտնի է որպես կառավարման ոլորտում լավագույն կրթություն տրամադրող հաստատություններից մեկը Հայաստանում: ՀՀՅՀ-ի կառավարման ֆակուլտետը գիտելիքների և հմտությունների մեծ պաշարի տրամադրման միջոցով պատրաստում է ուսանողներ, որոնք կգբաղեցնեն բարձր պաշտոններ տեղական, տարածաշրջանային և միջազգային ասպարեզում ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային ոլորտներում: Նրանք կարող են նաև սոցիալապես պատասխանատու ձեռներեցներ դառնալ:

“

Կառավարման ֆակուլտետի նպատակը բանիմաց մասնագետներ և քաղաքացիներ, քաղաքացիական հասարակության շարժիչ ուժեր պատրաստելն է: Այն կոչված է ձևավորելու Էթիկական ուրույն մտածելակերպ ունեցող անձանց միջավայր: Այսպիսով, այդ նպատակը ենթադրում է մի իրական համալսարանական հաստատության ձևավորումը, որը պարտավորվում է դառնալու ակադեմիական այնպիսի արժեքների կրողը, ինչպիսին են մտավոր ազատությունն ու ինստիտուցիոնալ անկախությունը:

”



**Ժան-Բատիստ Կարիե
Համադեկան**

”

Հայաստանում ֆրանսիական համալսարանում կառավարման բակալավրիատն ավարտելուց հետո շրջանավարտները ստանում են միաժամանակ երկու պետական դիպլոմ հայկական և ֆրանսիական: Ընդ որում, ֆրանսիական դիպլոմը ժան Մուլեն Լիոն 3 համալսարանի դիպլոմն է՝ ողջ աշխարհում իր նույն իրավական և ակադեմիական կշիռով: հանգամանք, որը միջազգային ասպարեզում լայն հնարավորություններ է ընձեռում:

ՀՖՀՀ կառավարման ֆակուլտետի կրթական ծրագիրն իր կրթական որակով և ձևաչափով համապատասխանում է մեծ հեղինակություն վայելող Լիոն 3 համալսարանի կրթական ծրագրին:

Դասավանդող կազմի զգալի մասը ֆրանսիայից ժամանած դասախոսներ են: Դասավանդում են նաև բարձր որակավորում ունեցող և մի շարք հեղինակավոր կազմակերպություններում (ՀՀ ԿԲ, գերատեսչություններ, մասնավոր բանկեր և այլ ընկերություններ) աշխատող հայ մասնագետներ: Առանձնահատուկ շեշտադրում ունի կրթության պրակտիկ, կիրառական մասը՝ հիմնված շուկայում արդի պահանջների վրա:

ՀՖՀՀ ուսումնական բոլոր գործընթացները անցնում են կարգապահական խիստ մթնոլորտում և անաչառության սկզբունքներով, որոնց շնորհիվ լրջագույնս ապահովվում է կրթության բարձր որակը:

Աշխատանքային հեռանկարներ

- Տնտեսագետ,
- Ֆինանսական ղեկավար,
- Բանկային գործի և ապահովագրության մասնագետ,
- Ֆինանսական վերլուծաբան,
- Ֆինանսական խորհրդական:

Կրթության շարունակության հնարավորություններ

Հեռանկարային են նաև մասնագիտական ուսումը շարունակական դարձնելու հնարավորությունները (միջազգային մագիստրատուրա, ասպիրանտուրա և այլն), քանի որ ստանալով ֆրանսիական բակալավրի աստիճան (դիպլոմ)՝ բացվում են դռները դեպի միջազգային բուհեր և մագիստրոսական ծրագրեր ներկայացնող տարբեր երկրներ:

Ուսանողներն անցնում են մասնագիտական պրակտիկա տարբեր ընկերություններում: Համալսարանը սերտ կապեր է հաստատել գործարար ոլորտի հետ, ինչն էլ նպաստում է ուսանողների և մասնավոր հատվածի միջև արդյունավետ շփմանը: Արդյունքում ուսանողները տարբեր առաջատար ընկերություններից ստանում են աշխատանքի առաջարկներ և իրենց աշխատանքային կարիերան սկսում են հենց ուսանողական տարիներից:



Ուսումնառության հիմնական ծրագրին զուգահեռ ուսանողների համար կազմակերպվում են բազմաթիվ գիտամշակութային և այլ միջոցառումներ, թիմային վարպետաց դասեր առաջատար ընկերությունների ներկայացուցիչների հետ:

Կառավարման ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողուհի Աիդա Գաբրիելյան

ՄԱՐՔԵԹԻՆԳ

**Ակադեմիական գործընկեր՝
Ժան Մուլեն Լիոն 3
համալսարան
Ուսման տևողություն՝ 4 տարի**

Մարքեթինգը արդիական, հեռանկարային և բարձր վարձատրվող մասնագիտություն է. բոլոր ընկերություններն ու կազմակերպությունները պետական թե մասնավոր, միջազգային թե տեղական, առևտրային թե հասարակական, ունեն մարքեթոլոգների կարիք: Այս մասնագետները պահանջված են տնտեսության բոլոր բնագավառներում. նրանք մշակում են մարքեթինգային ռազմավարություն և կյանքի կոչում այն, կատարում են մարքեթինգային պլանների մշակում, մարքեթինգային հետազոտությունների պլանավորում և իրականացում, գովազդային և PR արշավների մշակում, կազմակերպում և իրականացում, բրենդի մշակում և կառավարում, վաճառքների պլանավորում, կառավարում և կազմակերպում և այլն:



Հիմնվելով Ֆրանսիայում բարձր հեղինակություն վայելող ակադեմիական գործընկեր Լիոն 3 համալսարանի մասնագիտական ծրագրերի վրա՝ ՅՖՀՀ-ի մարքեթինգի ֆակուլտետը հնարավորություն է տալիս ուսանողին ստանալու տեսական և գործնական հիմնարար գիտելիքներ, ձևավորելու մարքեթինգի և վաճառքի բնագավառներում գործունեություն իրականացնելու, ղեկավարելու, որոշումներ կայացնելու և կառավարելու կարողություններ, որոնք համապատասխանում են միջազգային և ազգային մասնագիտական չափանիշներին: ՅՖՀՀ-ի մարքեթինգի ֆակուլտետը շուրջ 20 տարի պատրաստել է աշխատաշուկայում պահանջված, մասնագիտական բարձր որակավորում ունեցող մասնագետներ, որոնք տիրապետում են նվազագույնը 4 օտար լեզուների և աշխատում են ՀՀ-ի և արտերկրի առաջատար ընկերություններում և կազմակերպություններում:

**Նահրա Հայրապետյան
ղեկան**

“
ՅՖՀՀ-ի մարքեթինգի ֆակուլտետն իր ուսանողներին հիմնարար գիտելիքներ է փոխանցում մարքեթինգի ոլորտում. սովորեցնում է կատարել շուկայի ուսումնասիրություններ, մարքեթինգային ռազմավարություններ, հաղորդակցություն սոցիալական ցանցերում, առևտրային բանակցություններ: Շրջանավարտները միայն մարքեթոլոգներ չեն դառնում, այլև նախաձեռնող, նախագծեր կազմող անձինք: Ստեղծարար մարդկանց ենք սպասում այս ֆակուլտետում:”

“
Այսօր մենք կանգնած ենք դրակյալ և միջուկային մասնագետների պատրաստման հավակնոտ խնդրի առջև, որոնք ունակ կլինեն կայացնելու գրագետ որոշումներ ամենադժվար իրավիճակներում, առաջնորդներ, որոնք կկարողանան արձագանքել նաև համաշխարհային թվային տնտեսության մարտահրավերներին: Եթե ցանկանում եք ստանալ բարձրորակ, ժամանակակից կրթություն մարքեթինգի, վաճառքի, գովազդի, հանրային կապերի (PR), թվային մարքեթինգի բնագավառներում, ընտրե՛ք ՅՖՀՀ-ի մարքեթինգի ֆակուլտետը:”

**Ժան-Բատիստ Կարրիե
Համադեկան**

25

ՀՖՀՀ-ի մարքեթինգի ֆակուլտետի կարևոր առանձնահատկություններից է ոլորտի առաջատար մասնագետների հայ և ֆրանսիացի դասախոսների ներգրավվածությունը դասավանդման մեջ, ինչի շնորհիվ արդյունավետորեն համադրվում են տեսական և պրակտիկ գիտելիքները: Գործնական պարապմունքների մեծ մասնաբաժինը թույլ է տալիս ուսանողներին ստանալ աշխատաշուկայի արդի պահանջներին համապատասխան կրթություն, լինել մրցունակ արագ ինտեգրվելով մասնագիտական կյանքին:

Ուսանողները մասնագիտական գիտելիքները և հմտությունները հաճախ կիրառում են ՀՀ-ում գործող ընկերությունների կողմից առաջարկվող իրական շուկայական իրավիճակների համար լուծումներ առաջարկելով կամ ծրագրեր մշակելով:

Այս մոտեցումը հնարավորություն է տալիս ուսանողներին ուսման ընթացքում բացահայտելու իրական մասնագիտական միջավայրը, ծանոթանալու ապագա գործատուների հետ՝ հաճախ ստանալով աշխատանքի առաջարկներ: Գործնական պարապմունքների ընթացքում դասավանդվող մասնագիտական առարկաների (մարքեթինգի հիմունքներ, PR, մարքեթինգ միջոց, որակական և քանակական մեթոդներ, մարքեթինգ պլան և այլն) շրջանակում ուսանողները ներկայացնում են խմբային աշխատանքներ և նախագծեր, որոնք ենթադրում են ընկերությունների իրական շուկայական իրավիճակների ուսումնասիրության վերլուծություն, լուծումների և ծրագրերի առաջարկներ:

Աշխատանքային հեռանկարներ

- կազմակերպության/ընկերության ղեկավար,
- կոմերցիոն տնօրեն,
- մարքեթինգի/վաճառքի տնօրեն,
- գովազդային գործակալության տնօրեն,
- միջազգային առևտրի պատասխանատու,
- հանրային կապերի (PR) մենեջեր,
- բրենդ մենեջեր,
- ծրագրերի ղեկավար,
- մերչենդայզեր,
- բիզնես վերլուծաբան,
- վաճառքի մասնագետ,
- գովազդային մասնագետ,
- մարքեթինգի մասնագետ,
- լոգիստիկայի մասնագետ,
- գնումների մասնագետ:

Կրթության շարունակության հնարավորություններ

Մարքեթինգի ֆակուլտետի բակալավրիատի շրջանավարտները կարող են իրենց ուսումը շարունակել ՀՖՀՀ-ի, ֆրանսիայի Ժան Մուլեն Լիոն 3 և հայաստանյան ու արտասահմանյան այլ բուհերի մագիստրատուրայում հետևյալ մասնագիտացումներով.

- մարքեթինգ և վաճառք,
- մարքեթինգային (միջազգային, միջմշակութային) հաղորդակցություններ,
- թվային մարքեթինգ,
- B2B մարքեթինգ,
- գովազդ և հանրային կապեր,
- բիզնեսի կառավարում,
- միջազգային առևտուր:



ՀՖՀՀ դիմելն ինձ համար լավագույն համալսարանի ընտրությունն էր, համալսարան, որն առանձնանում է միջազգային կրթությամբ և երկու դիպլոմի շնորհմամբ: ՀՖՀՀ-ում սովորելը նաև ուֆառայան համայնքի մաս կազմելն է, ինչը նպաստում է մեր անձնական և մասնագիտական աճին: Դա նաև ամբողջ կյանքի համար ընկերներ ձեռք բերելն ու համալսարանական ակտիվ և հետաքրքիր կյանք վարելն է:

Մարքեթինգի ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողուհի Թամարա Դանիելյան

ՖԻՆԱՆՍՆԵՐ

**Ակադեմիական գործընկեր՝
Ժան Մուլեն Լիոն 3
համալսարան
Ուսման տևողություն՝ 4 տարի**

Հետազոտությունները ցույց են տալիս, որ աշխատաշուկայում պահանջված մասնագետների թվաքանակով ֆինանսաբանկային ոլորտը գիշում է միայն տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտին: Ընդ որում, ֆինանսների շուկայում աշխատավարձի մակարդակը համեմատաբար բարձր է:

Տնտեսության ցանկացած ոլորտ ունի ֆինանսիստի և կամ հաշվապահի պահանջ: Այդ պահանջն անկախ է տնտեսության կառուցվածքային փոփոխություններից: Ուստի ֆինանսների գծով մասնագետը ձեռք է բերում լայն հնարավորություններ իր ողջ կյանքի ընթացքում ցանկացած ոլորտում:

Ֆինանսներ կրթական ծրագիրն օգնում է տիրապետելու թե՛ ֆինանսական, թե՛ հաշվապահական և թե՛ հարկային կրթություններին, որոնք չափազանց անհրաժեշտ են հատկապես նոր բիզնեսի հիմնադրման փուլում:

ՀՖՀՀ-ում ֆինանսների գծով բակալավրիատը ավարտելուց հետո շրջանավարտները ստանում են միաժամանակ երկու պետական դիպլոմ՝ հայկական և ֆրանսիական: Ընդ որում, ֆրանսիական դիպլոմը Ժան Մուլեն Լիոն 3 համալսարանի դիպլոմն է՝ ողջ աշխարհում իր նույն իրավական և ակադեմիական



կշիռով. հանգամանք, որը միջազգային ասպարեզում լայն հնարավորություններ է ընձեռում:

ՀՖՀՀ ֆինանսների ֆակուլտետի կրթական ծրագիրն իր կրթական որակով և ձևաչափով համապատասխանում է մեծ հեղինակություն վայելող Լիոն 3 համալսարանի կրթական ծրագրին:

Ֆրանսերենից բացի՝ համալսարանում ուսուցանվում են նաև տարբեր լեզուներ (անգլերեն, ռուսերեն, իսպաներեն, գերմաներեն և այլն), ինչը մրցակցային առավելություն է տալիս ՀՖՀՀ շրջանավարտներին:

Դասավանդող կազմի զգալի մասը ֆրանսիայից ժամանած դասախոսներ են: Դասավանդում են նաև բարձր որակավորում ունեցող և մի շարք հեղինակավոր կազմակերպություններում (ՀՀ ԿԲ, գերատեսչություններ, մասնավոր բանկեր և այլ ընկերություններ) աշխատող հայ մասնագետներ: Առանձնահատուկ շեշտադրում ունի կրթության պրակտիկ կիրառական մասը՝ հիմնված շուկայում արդի պահանջների վրա:

ՀՖՀՀ ուսումնական բոլոր գործընթացները անցնում են կարգապահական խիստ մթնոլորտում և անաչառության սկզբունքներով, որոնց շնորհիվ լրջագույնս ապահովվում է կրթության բարձր որակը:



**Հրանտ Հարությունյան
ղեկան**

“ Ֆինանսների ֆակուլտետը ուսանողին ընձեռում է բացառիկ հնարավորություն ուսումնասիրությունն անցնելու Հայաստանի առաջատար բանկերում և ապահովագրական ընկերություններում այնտեղ աշխատելու միջոցով: Դուրս բարձրագույն կրթությունը (ԴԲԿ) Հայաստանում կրթական նոր մոտեցում է, որը մշակվել է ՀՀՀՀ-ի նախաձեռնությամբ Էրազմուս+ ծրագրի շրջանակներում: ԴԲԿ-ն ենթադրում է ուսանողի կողմից մասնագիտական հմտությունների և կարողությունների ձեռքբերում անմիջապես մասնավոր ոլորտի կազմակերպություններում աշխատելու միջոցով: ”

“ ՀՀՀՀ-ի ֆինանսների ֆակուլտետը հիմնվել է 2014թ.-ին. այն ավելի երիտասարդ է, քան այս հաստատության առաջին երեք՝ իրավագիտության, կառավարման, մարքեթինգի ֆակուլտետները: ՀՀՀՀ-ի ֆինանսների ֆակուլտետում ուսանել նշանակում է ավարտելուց հետո ունենալ այնպիսի գործատուներ, ինչպիսիք են բանկերը, հայկական և միջազգային ֆինանսական կազմակերպությունները, քանզի գինված կլինեք ամուր և հիմնարար գիտելիքներով իրենց ոլորտների մասնագետ դասախոսների շնորհիվ: ”



**Ժան-Քառիստ Կարադե
Համադեկան**

Աշխատանքային հեռանկարներ

- Ֆինանսական մենեջեր,
- Հաշվապահ,
- Աուդիտոր,
- Ֆինանսական վերլուծաբան,
- Վիճակագիր-տնտեսագետ վերլուծաբան:

Կրթության շարունակության հնարավորություններ

Հեռանկարային են նաև մասնագիտական ուսումը շարունակական դարձնելու հնարավորությունները (միջազգային մագիստրատուրա, ասպիրանտուրա և այլն), քանի որ ստանալով ֆրանսիական բակալավրի աստիճան (դիպլոմ) բացվում են դեպի միջազգային բուհեր և մագիստրոսական ծրագրեր ներկայացնող տարբեր երկրների դռները:


Ուսանողներն անցնում են մասնագիտական պրակտիկա տարբեր ընկերություններում: Համալսարանը սերտ կապեր է հաստատել բիզնես ոլորտի հետ, ինչն էլ նպաստում է ուսանողների և մասնավոր հատվածի միջև արդյունավետ շփմանը: Արդյունքում ուսանողները տարբեր առաջատար ընկերություններից ստանում են աշխատանքի առաջարկներ և իրենց աշխատանքային կարիերան սկսում են հենց ուսանողական տարիներից:



ՀՀՖՀՀ-ում սովորելը նշանակում է բացահայտել մասնագիտական մի շարք գաղտնիքներ և տիրապետել մի քանի օտար լեզուների: Դա տեսական և գործնական գիտելիքները համադրելու և ներկայիս աշխատաշուկայում պահանջվող հմտությունները զարգացնելու հնարավորություն ունենալն է:

Ֆինանսների
ֆակուլտետի 3-րդ կուրսի
ուսանողուհի
Տաիսա Քալաշյան





ՊԱՏՐԱՍՏՎԵԼ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆԸ

Հայաստանում ֆրանսիական համալսարանը կազմակերպում է Նախապատրաստական դասընթացներ դիմորդներին ընդունելության քննություններին պատրաստելու համար:

Ն ա խ ա պ ա տ Ր ա ս տ ա կ ա ն դասընթացների նպատակը

դիմորդներին համալսարանի ընդունելության քննություններին պատրաստելն է: Դասընթացներին մասնակցությունը նաև հնարավորություն է տալիս ծանոթանալու ՀՖՀՀ-ի առանձնահատկություններին և դասավանդման մեթոդներին*:

Ինչպե՞ս գրանցվել:

Նախապատրաստական դասընթացներին գրանցվելու** համար անհրաժեշտ է հայտ ներկայացնել: Հայտերի ընդունումը կատարվում է **միայն առցանց**:

Առցանց գրանցվելու համար անհրաժեշտ է **հղումով** գրանցվել և **admission@ufar.am** էլ.հասցեին ուղարկել հետևյալ փաստաթղթերը՝

- ✔ դիմորդի անձնագրի 2-րդ, 3-րդ և 5-րդ էջերի և ծննդյան վկայականի լուսաձրված պատճենները (սքան),
- ✔ անչափահաս դիմորդների համար ծնողի կողմից լրացված համաձայնագրի լուսաձրված (հասանելի է ufar.am կայքում) (ծնողի ստորագրության առկայությունը պարտադիր է) և վերջինիս անձնագրի 2-րդ, 3-րդ էջերի լուսաձրված տարբերակները,
- ✔ 3x4 չափի 1 լուսանկար (JPEG ձևաչափով), որն անհրաժեշտ է ուղարկել որպես առանձին փաստաթուղթ,
- ✔ գործերի ընդունման համար վճարվող գումարի անդորրագրի լուսաձրված տարբերակը (6000 դրամ):

Դասընթացի վարձեր 2022-2023
 -հայոց լեզու՝ 110 000 դրամ
 -օտար լեզու՝ 130 000 դրամ
 -հասարակագիտություն՝ 140 000 դրամ
 -մաթեմատիկա՝ 140 000 դրամ
 -խորացված մաթեմատիկա՝ 170 000 դրամ


Գումարը վճարվում է ըստ կիսամյակների.

Գումարը վճարվում է ըստ կիսամյակների. մինչև 2022 թ. սեպտեմբերի 15-ը (ներառյալ)՝ առաջին կիսամյակի համար, մինչև 2023 թ. հունվարի 15-ը (ներառյալ)՝ երկրորդ կիսամյակի համար: Ուսման վարձը հնարավոր է նաև վճարել մինչև յուրաքանչյուր ամսվա 15-ը:

Վճարումը կարող եք իրականացնել ցանկացած բանկում ստորև ներկայացված տվյալներով՝

Ստացող - «Հայաստանում ֆրանսիական համալսարան»
 Հասցե - ք. Երևան, Դավիթ Անհաղթի 10
 ՀՎՀՀ 01002296
 Վճարման նպատակը՝
 Նախապատրաստական դասընթացներ, դիմորդի ազգանուն, անուն, հայրանուն
 Բանկ - «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ, «ԶԵՅԹՈՒՆ»
 մասնաճյուղ Հ/Հ 220303350015000

* Հավելյալ տեղեկությունների համար այցելեք ufar.am կայքը:
 **Գրանցվել կարելի է թե՛ մեկ, թե՛ մի քանի առարկաների դասընթացներին՝ ըստ ֆակուլտետի:



ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ

1.Ներկայացնել հայտ.

Ընդունելության մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է **հղումով** գրանցվել և գրանցման ընթացքում կցել հետևյալ փաստաթղթերը.

- ✓ լրիվ միջնակարգ կրթության վկայականի լուսաձրված (սքանավորված) տարբերակը կամ տեղեկանք դպրոցից 12-րդ դասարանում սովորելու մասին,
- ✓ անձնագրի կամ նույնականացման քարտի լուսաձրված տարբերակը (սկանավորված) , ծննդյան վկայականի պատճենը չի ընդունվում,
- ✓ 3x4 չափի մեկ պաշտոնական ոճի լուսանկար (միայն JPC ձևաչափով),
- ✓ ՀՀ քաղաքացիների համար կցագրման վկայականի կամ գինգրքույկի լուսաձրված (սքանավորված) տարբերակը,
- ✓ գործերի ընդունման համար հայտը լրացնելու ժամանակ վճարումը կատարել առցանց կամ կցել անդորրագիրը (7500 դրամ),
- ✓ առկայության դեպքում 2023-2024 ուստարվա ՀՖՀՀ-ի Licence/բակլավրիատ ընդունելության կանոնակարգի 2.1.7 կետով սահմանված դիալոմների/վկայականների լուսաձրված (սքանավորված) տարբերակը:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ 2023-2024

Դիմումի փաթեթը կարող եք ներկայացնել 2023 թ.-ի **մայիսի 15-ից հունիսի 4 -ը** ընդունող հանձնաժողովին:



Տարվա ընթացքում համալսարանը 2 անգամ կազմակերպում է **բաց դռների օրեր** կրթական ծրագրերն ու քննությունները ներկայացնելու և ձեր հարցերին պատասխանելու համար:

2. Մասնակցել քննություններին.

ՀՀՀՀ-ի քննություններն անկախ են պետական միասնական քննություններից և հիմնվում են հանրակրթական դպրոցի ծրագրերի վրա*:



Ֆրանսերենի իմացությունը բակալավրիատ դիմելու համար պարտադիր չէ:

2022թ.-ին ՀՀՀՀ ընդունվածների 90%-ից ավելին ընդունվել է առանց ֆրանսերենի իմացության:

- ✓ Այն դիմորդները, որոնք ունեն.
 - ֆրանսերենի իմացության վկայական **DELFB1 Tout Public** (առնվազն 50 միավոր) կամ **DELFB Junior B1** (առնվազն 60 միավոր),
 - անգլերենի իմացության **IELTS Academic** (առնվազն 6՝ բաղադրիչներից յուրաքանչյուրի նվազագույն միավորը պետք է լինի 6), **TOEFL** (առնվազն 70, չեն ընդունվի այն վկայականները, որտեղ բաղադրիչների մեկի կամ մի քանիսի միավորը ցածր կլինի 17-ից), **Cambridge Assessment English FCE, BEC Vantage, BEC Higher, CAE, CPE** վկայականներ:
- ✓ TOEFL MyBest Scores միավորը չի ընդունվում:
- ✓ Գերմաներենի իմացության **GOETHE-ZERTIFIKAT B1** (բաղադրիչներից յուրաքանչյուրի նվազագույն միավորը պետք է լինի 60), **TELC Deutsch B1** (առնվազն 180 միավոր), **DSD 1** քննությունը՝ B1 մակարդակ), **DSD I PRO** քննությունը՝ B1 մակարդակ, **Test DaF (TDN 4)**, հնարավորություն ունեն հեշտացված կարգով առանց օտար լեզվի քննության, ընդունվելու ՀՀՀՀ:

Նշված դիմորդները կստանան առավելագույն միավոր օտար լեզվի ընդունելության քննությունից:**

*2022-2023 ուստարվա թեստերի նմուշները հասանելի են ufar.am կայքում:
 **Վերոնշյալ վկայականների անցողիկ միավորների անհրաժեշտ է ծանոթանալ ՀՀՀՀ կայքում գետեղված ընդունելության կանոնակարգում:



Իրավագիտություն

Քննություններ	Քննության տևողություն	Առավելագույն միավոր	Մրցույթին մասնակցելու համար նվազագույն միավոր
հասարակագիտություն	2,5 ժամ	100	35
օտար լեզու (ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն)	2,5 ժամ	40	14
հայոց լեզու	2,5 ժամ	40	14

Կառավարում, Մարքեթինգ, Ֆինանսներ

Քննություններ	Քննության տևողություն	Առավելագույն միավոր	Մրցույթին մասնակցելու համար նվազագույն միավոր
մաթեմատիկա	3,5 ժամ	100	35
օտար լեզու (ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն)	2,5 ժամ	40	14
հայոց լեզու	2,5 ժամ	40	14

Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա

Քննություններ	Քննության տևողություն	Առավելագույն միավոր	Մրցույթին մասնակցելու համար նվազագույն միավոր
խորացված մաթեմատիկա	4 ժամ	120	48
օտար լեզու (ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն)	2,5 ժամ	60	21

ՖԻՆԱՆՍԱՎՈՐԵԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ



Ուսման վարձեր 2023-2024

Իրավաբանական, կառավարման, ֆինանսների և մարքեթինգի ֆակուլտետներ

1-րդ կուրս՝ 960 000 դրամ
2-րդ կուրս՝ 985 000 դրամ
3-րդ կուրս՝ 1.000. 000 դրամ
4-րդ կուրս՝ 1.050. 000 դրամ

Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ

1-րդ կուրս՝ 1 120 000 դրամ
2-րդ կուրս՝ 1 150 000 դրամ
3-րդ կուրս՝ 1 200 000 դրամ
4-րդ կուրս՝ 1 250 000 դրամ



Բազմաթիվ կրթաթոշակներ և սոցիալական օգնություն

Բազմաթիվ կրթաթոշակներ և սոցիալական օգնություն

ՀՀՀՀ-ն աջակցություն է ցուցաբերում ուսանողներին և նրանց ընտանիքներին՝ ՀՀ կառավարության, Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության, Հայկական բարեգործական ընդհանուր միության, Ընկերական օգնության հայկական ընկերակցության, Ֆրանկոֆոն փաստաբանների միության և այլ բարերարների օգնությամբ կրթաթոշակներ և սոցիալական օգնություն տրամադրելով:

Մի շարք բարերարներ կրթաթոշակներ են տրամադրում միայն ՀՀՀՀ-ի ուսանողներին:

ՀՀՀՀ-ում գործում է ուսանողական նպաստի տրամադրման 2 տարբերակ.


Առաջինը **ուսումնառության կրթաթոշակ** է, որը լավագույն ուսանողին թույլ է տալիս յուրաքանչյուր կիսամյակ օգտվել 25%, 50% կամ 100% գեղչային համակարգից:

Երկրորդը **սոցիալական օգնության նպաստ** է: Հանձնաժողովն ուսումնասիրում է հայտ ներկայացրած յուրաքանչյուր ուսանողի փաստաթուղթը, առանձնացնում է տարբեր չափանիշներ՝ ընտանիքի սոցիալական կարգավիճակ, միակողմանի ծնողազրկություն, հաշմանդամություն կամ պատերազմի հետ կապված իրավիճակներ, բնակավայրի աշխարհագրական դիրք, ընտանիքի անդամների թիվ, նույն համալսարանում սովորող ուսանողների թիվ:



ԼԻՆԵԼ ԱԿՏԻՎ ՈՒՍԱՆՈՂ

Ուսումնառության առաջին տարվանից ուսանողները կարող են դառնալ ՀՀՀՀ-ի ուսանողական խորհրդի անդամ և իրենց ազդեցությունն ունենալ համալսարանական կյանքի վրա: ՈՒՄ-ն նպաստում է ուսանողական կյանքի ակտիվությանը, մասնակցում է ուսանողների ֆիզիկական և բարոյական զարգացմանը՝ համագործակցելով ՀՀ և արտերկրի այլ բուհերի և կազմակերպությունների հետ: Այս կառույցը համալսարանի գործունեության բարելավմանն ուղղված հարցերում կարևոր գործընկեր է, նորարարության և ստեղծարարության աղբյուր:



ՈՒՄ-ին կից գործում են մի շարք՝ կամավորների, երաժշտական, լրագրության, բանավեճի, ընթերցանության ակումբներ, որոնց շնորհիվ համալսարանական կյանքն ավելի աշխույժ է դառնում, և բավարարվում են ուսանողների հետաքրքրությունները:

Էլ. հասցե՝ conseil_etudiants@ufar.am
Facebook: <https://www.facebook.com/UFARCE>
Instagram: @ceufar



«Հայաստանում ֆրանսիական համալսարան» իրմնադրամ
ԶԼՄ հաղորդակցության և հանրային կապերի կենտրոն
0037 ք. Երևան, Դավիթ Անհաղթի 10
+374 10 24 96 47
info@ufar.am



Liberté • Égalité • Fraternité
RÉPUBLIQUE FRANÇAISE

MINISTÈRE
DE L'EUROPE ET DES
AFFAIRES ÉTRANGÈRES

UFAR ՀԱՅԱՍՏԱՆՈՒ
ՖՐԱՆՏԻԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

WWW.UFAR.AM

